# «ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

Հաստատված է՝
« Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և
արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2023թ. սեպտեմբերի 11-ի N6/2023 որոշմա

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը սահմանվում է ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների տարեկան անհատական ծանրաբեռնվածության (այսուհետ՝ ծանրաբեռնվածություն) կազմման, իրականացման աշխատակարգը:
2. Սույն աշխատակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են տարֆիկացիոն հանձնաժողովի, ապա՝ մանկավարժական խորհրդի կողմից:
3.

## 1. ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ծանրաբեռնվածությունը կազմելիս հաշվի է առնվում դասախոսի պաշտոնը, որակավորումը:
2. Ծանրաբեռնվածությունը կազմելիս հաշվի է առնվում դասախոսի կրթությունը և կրթության վերաբերյալ փաստաթղթի տվյալները (դիպլոմ համարը, որտեղ և որ թվականին է ավարտել):
3. Ծանրաբեռնվածությունը կազմելիս հաշվի է առնվում դասախոսի աշխատանքային ստաժը:
4. Հաշվի է առնվում տարիֆի չափը՝ 720 ժամ( 10ամսվա կտրվածքով):
5. Առանձին նշվում է ամբողջ տարեկան ծանրաբեռնվածությունը՝ ըստ ընդհանուր ժամաքանակի (միջին մասնագիտական կրթական համակարգի համար:
6. Ներկայացվում է ամսական միջին աշխատավարձը (հասանելիք աշխատավարձը): Անհրաժեշտության դեպքում նշվում է նաև գրավոր աշխատանքների տրման ու ստուգմանը հատկացվող վճարման չափը:

7. Վերջնական կազմված ծանրաբեռնվածությունը ներկայացվում է հաստատության խորհրդին տնօրենի ներկայացմամբ ՝ տարեֆիկացիայի տեսքով: